Ֆադեյ Սարգսյանը վերընտրվեց ակադեմիայի պրեզիդենտ

ՀՀ ԳԱԱ օրենսդրությանը համապատասխան, մայիսի 20-ին ակադեմիայում տեղի ունեցան պրեզիդենտի ընտրություններ:

Այդ պաշտոնում ընտրելու համար ակադեմիկոս Էդվարդ Զրբաշյանն առաջարկեց Ֆադեյ Սարգսյանի թեկնածությունը:

Ֆադեյ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանեցին ակադեմիկոսներ Գրիգոր Գուրզադյանը, Վռամ Դովլաթյանը:

Նշվեց, որ արդեն վեց տարի, պրեզիդենտի պաշտոնում Ֆ. Սարգսյանը ակադեմիան ղեկավարում է հաջողությամբ ու նվիրումով: Հայաստանի համար դժվարին տարիներին նրա ջանքերով պահպանվել է ակադեմիայի ներուժը, աշխատանքները վերակառուցվել են ժամանակակից պահանջներին համապատասխան: Նա աչքի է ընկնում նվիրումով, եռանդով, գործարարությամբ, ժողովրդի և գիտության շահերն ամեն ինչից վեր դասելու ունակությամբ: Առանձնապես ընդգծվեցին նրա մարդկային հատկանիշները՝ բարյացակամությունը, հոգատարությունը աշխատակիցների նկատմամբ:

Փակ, գաղտնի, քվեարկությամբ, որին մասնակցում էին 119 ակադեմիկոսներ, 107 կողմ և 12 դեմ քվեով Ֆադեյ Տաճատի Սարգսյանը կրկին ընտրվեց պրեզիդենտի պաշտոնում:

Է.Ա.